

Ցևիմեդ 100մգ/մլ

Դեղաբանական ձև. Կաթիլներ ներքին ընդունման համար:

Բաղադրություն. 1 մլ պարունակում է. Ակտիվ նյութ՝ ասկորբինաթթու (վիտամին C) 100 մգ:

Օժանդակ նյութեր. Անջուր գլիցերին, մաքրված ջուր:

Դեղաբանական հատկություններ

Վիտամին C-ի պակասը լրացնող, նյութափոխանակային, օքսիդավերականգնման գործընթացները կարգավորող, հակաօքսիդանա:

Օժոված է արտահայտված հակաօքսիդանային հատկությամբ: Կարգավորում է H+ իոնների տեղափոխումը շատ կենսաֆիզիկական ռեակցիաներում, լավացնում է եռաժխածնային թթուների ցիկլում գլյուկոզայի օգտագործումը, մասնակցում է տեսրահիպրոֆուլաթթվի առաջացմանը, ստերոիդային հորմոնների, կոլագենի, պրոկոլագենի, կարիտինի սինթեզին, սերոտոնինի հիպոթալիացմանը: Վիտամին C պահպանում է միջբջջային նյութերի կոլոիդային վիճակը և մազանոթների բնականոն թափանցելիությունը (հեռում է հիալուրոնիդազային): Ակտիվացնում է պրոտեոլիտիկ ֆերմենտներին, մասնակցում է արոմատիկ ամինաթթուների, գունանյութերի և խոլեստերինի նյութափոխանակությանը, նպաստում է լյարդում գլիկոգենի կուտակմանը: Շնչառական ֆերմենտների ակտիվացման շնորհիվ լյարդում ուժեղանում է նրա դետոքսիկացիան և սպիտակուց առաջացնող ֆունկցիան, բարձրացնում է պրոթրոմբինի սինթեզը: Այն լավացնում է լեդարտագատումը, վերականգնում է ենթաստամոսային գեղձի արտագատական ֆունկցիան և վահանաձև գեղձի էնդոկրին ֆունկցիան: Կարգավորում է իմունոլոգիական ռեակցիաները, նպաստում է ֆագոցիտոզին, բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը վարակների նկատմամբ: Ցուցաբերում է հակաբորբոքային և հակաալերգիկ ազդեցություն: Արգելափակում է հիստամինի դուրսբերումը և արագացնում է դեգրադացիան, խոչնդոտում է պրոստոգլանդինների և այլ մեդիատորների՝ բորբոքային և անաֆիլակսիկ, ձևավորմանը: Նվազեցնում է B1, B2, A, E վիտամինների, ֆոլաթթվի, պանտոտենաթթվի պահանջը: Ասկորբինաթթվի անբավարարությունը հանգեցնում է հիպովիտամինոզի առաջացմանը, իսկ ծանր դեպքերում՝ ավիտամինոզի (սկորբուտ, ցինգա):

Կիրառման ցուցումներ

Հիպո- և ավիտամինոզ C- ի բուժում և կանխարգելում:

Ասկորբինաթթվի անբավարարության դեպքում՝

- արիեստական կերակրման և ինտենսիվ աճի շրջանում,
- անկանոն սնունդ
- մտավոր և ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում,
- լուրջ հիվանդություններից հետո վերականգնման շրջան,
- այրվածքային հիվանդություն

տեղադրված վիճակ՝ արտահայտված սուր շնչառական հիվանդության և սուր շնչառական վիրուսային վարակների (ՄՇՀ, ՄՇՎ) ֆոնի վրա

- երկարատև ֆունկցիոնալ վարակներ,

Հակացուցումներ

Գերզգայունություն ասկորբինաթրոփի և/կամ նրա այլ բաղադրիչների նկատմամբ:

Կիրառման ձև և դեղաչափում

Կիրառում են ներքին ընդունման ձևով, ուտելու ընթացքում:

Նորինուրդ է տրվում օրական դեղաչափը բաժանել մի ֆանի ընդունումների:

Երեխաների համար խորհուրդ է տրվում ավելացնել կաթիլները ջրի, թեյի, հյութի կամ սննդի մեջ:

1 կաթիլ պարունակում է 5 մգ ասկորբինաթրոփ:

Պրոֆիլակտիկայի նպատակով (օրական դեղաչափը)՝

- կրծքով կերակրվող երեխաներին և 1 տարեկան երեխաներին՝ 5-8 կաթիլ (25-40 մգ) /;

- 2-ից 11 տարեկան երեխաներին՝ 10 կաթիլ (50 մգ) /;

- 12-17 տարեկան դեռահասներին՝ 15-20 կաթիլ (75-100 մգ):

Թերապևտիկ դեղաչափերը 2-5 անգամ գերազանցում են պրոֆիլակտիկ դեղաչափերին (կախված ցուցումներից):

Կողմնակի երևույթներ

Դեղը կիրառումը հիշտ դեղաչափերով լավ է յուրացվում օրգանիզմի կողմից:

Դեղի բարձր դեղաչափերով երկարատև օգտագործման դեպքում կարող են զարգանալ հետևյալ կողմնակի ազդեցությունները՝

Միզարտադրական համակարգի կողմից – մեզով ոսկրաթրոփի արտազատման ուժեղացում, ուրատների և ցիտրատի բյուրեղացում, որը մեծացնում է քարերի առաջացման վտանգը:

Մարսողական համակարգի կողմից - դիսպեպսիայի ախտահանները (փսխում, արտախոնոց):

Արյունատար համակարգի կողմից - արյունահոսություն, գլյուկոզ-6-ֆոսֆատդեհիդրոգենազայի պակասորդ ունեցող հիվանդների մոտ՝ հեմոլիզ:

Այլ - հիպերգլիկեմիա, գլխուրախ:

Ասկորբինաթրոփի երկարատև օգտագործումը կարող է հանգեցնել կախվածության:

Նախազգուշացումներ

Զգբարգանցել նշված դեղաչափը: Զօգտագործել երկար և պրինձ պարունակող դեղերի հետ, ֆանի որ ասկորբինաթրոփն օժտված է վերականգնող ազդեցությամբ:

Նորինուրդ է տրվում օգտագործել ասկորբինաթրոփն օրվա ընթացքում ոչ ավել, քան 100 մգ/օր , միզաքայլի հիվանդություններով հիվանդներին, հիպերոքսալուրիայով և երիկամներում քարերի առաջացման հակում ունեցող

հիվանդներին (особенно оксалатных или мочекислых), ինչպես նաև օրգանիզմում երկաթի ավելցուկային ֆանակի դեպքում (հեմոֆրոմատոզ, մանգաղածև բջջային անեմիա, տալասեմիա, երկաթի դեղերով թունավորում), ինչպես նաև երիկամային անբավարարությամբ հիվանդներին, ոսկրաթթվի և ասկորբինաթթվի նյութափոխանակության խանգարման ժամանակ:

Բարձր դոզաներով օգտագործումը ասկորբինաթթվի կարող է ազդել լաբորատոր հետազոտությունների արդյունքների վրա, որոնք իրականացվում են օֆոլիդա-վերականգնման ռեակցիաների կիրառմամբ (օրինակ, Գրեգերսենի ռեակցիաների իրականացում, արյան պլազմայում և մեզում գլյուկոզայի եւ կրեատինինի ֆանակների որոշում):

Զգուշությամբ նշանակել Շաֆարային դիաբետով հիվանդներին:

Հղիություն և կրծքով կերակրում

Դեղը կարող է օգտագործվել հղիության ընթացքում: Հղիության ընթացքում օրգանիզմի ասկորբինաթթվի օրական պահանջը 80 մգ է: Այնուամենայնիվ, հղիության ընթացքում բարձր դեղաչափով ասկորբինաթթվի օգտագործումը հանգեցնում է նորածինների մոտ նրա անբավարարության ախտանիշերի առաջացմանը՝ պայմանավորված նյութափոխանակության պրոցեսների խթանման հետևանքով: Դեղը կարող է օգտագործվել կրծքով կերակրման ընթացքում: Կրծքով կերակրման ընթացքում օրգանիզմի օրական ասկորբինաթթվի պահանջարկը 100 մգ է: Ասկորբինաթթվի կոնցենտրացիան մայրական կաթի մեջ կազմում է 30-55 մկգ / մլ: Կրծքով կերակրման ընդացքում պետք է խուսափել վիտամին C- ի բարձր դեղաչափի նշանակումից՝ գերդեղաչափումից խուսափելու նպատակով:

Թողարկման ձև

10 մլ կամ 30 մլ սաքազույն ապակե սրվակ-կաթոցիկ և ներդիր թերթիկ սովորաբար տուփում:

Պիտանիության ժամկետ

2 տարի:

Ֆլակոնը բացելուց հետո պիտանիության ժամկետը – 6 ամիս:

Պահպանման պայմաններ

Պահել լույսից պաշտպանված և երեխաների համար անհասանելի վայրում 25°C-ից ոչ բարձր պայմաններում:

Բացթողման կարգ

Դեղատոմսով: